

Անիք - Անգլո-թուրք
տնտեսական հարաբերակցություն
1909թ.

291. 99

S-37


12 MAR 2011

ՀԵՒՈՂԴ ՔԱՀԱՆԱՅ ՏԷՐ ԱԻԵՏԻՍԵԱՆ

(ՄՕՐԻԿ-ՊԱՏՐԻԿ)

ԽԵՆԹ ՄՇԵՑՈՒ

ԽԵԼԱՅԻ ԽՕՍՔԵՐ



891.99
S-37

1909

ՀԵՐՈՆԻ ՔԱՂԱՆԱՅ ՏԵՐ ԱԻԵՏԻՍԵԱՆ

(ՄՕՐԻԿ-ՊԱՏՐԻԿ)

10/
Printed in Turkey

ԽԵՆԹ ՄՇԵՅՈՒ

ԽԵԼԱՅԻ ԽՕՍՔԵՐ



1909

3 0 .08. 2013

58183

Printed in Turkey

Այսօրուան օդն է ամպամած ,
Կարդա՛ դու սա ուղիղ գրուած ,
Թէեւ փոքրիկ է սոյն յօդուած ,
Յառաջ կ'երթաս դու անկասկած :

Մի կայնիր ինձ դու ղիմադարձ ,
Բան կ'ուսանիս վկայ Աստուած ,
Յեղդ սիրէ , սիրով վառուած
Միմիայն չըլլաս դուն ազգասէպ :



191
39

ՅԱՌԱԶԱԲԱՆ

Աւետում եմ ես քեզ միայն
Կարգա՛ դու սա յառաջաբան ,
Կայ մի ստիպում գիտնականին ,
Մութն է թողում գիմառտ բանին :
Տանուտերի խիստ բանութիւն ,
Հալածում է անէ ի տուն :

Գործ կը մնայ խելքի հանձար ,
Գրչով կանեն մարդու մի ճար ,
Դուն աշխատիր իմ գրուածներ ,
Կամաց կարդա մտքումդ առ ,
Այն ժամանակ յոյժ կուտանիս ,
Դու իմ փոքրիկ նազելի գառ :

Տգեղ գրչիս փոքրիկ է տառ ,
Ուշադրութեամբ մտքումդ առ ,
Բռնութեան դէմ կը դնէ միշտ ,
Հանձարեղ մարդ վեհ՝ դադարար ,
Հաւատացիր գրուած բանիս ,
Դէմ չդնես աւետումիւն :

ՏԱՐԱՆԱՅԻ ՊԱՆԴԽՏԻ ԵՐԳԻ

Մայիս ամսուն դու ղեկիւռիկ ,
Սլանում ես Մշոյ լերինք ,
Կորուցեր եմ քաղցր հայրենիք
Կուլամ, կ'ողբամ, Հասես հերիք :
Կուլամ, կ'ողբամ, Հասես հերիք :

Լեռն Մշոյ է նման Մասիս ,
Մայրիկս կուլայ կոչում է զիս ,
Կասէ ինձի եկուր առ իս ,
Բա՛ւ է Վարդանա դուն թափառիս ,
Բա՛ւ է Վարդանա դուն թափառիս :

Պանտուխտ եմ ես օտարութեան ,
Ատեն չունիմ որ առ քեզ դամ ,
Յաւերս չատ են վիշտս յարածամ ,
Գուցէ սոցա եմ ես արժան ,
Գուցէ սոցա եմ ես արժան :

Ես միայն եմ թշուառ անտէր ,
Ձիք կարեկից բլլայ ինձ տէր ,
Թափառում եմ օտար աւեր ,
Բա՛ւ է կրեմ ես սա ցաւեր ,
Բա՛ւ է կրեմ ես սա ցաւեր :

Անբաղա եմ ես Տարօնացի ,
Շատ ժամանակ պանտուխտ մնացի ,
Յաւօք սրտիւ միշտ ես լացի ,
Մշոյ երկրէն կարօտ մնացի ,
Հայրենիքէս կարօտ մնացի :

Ծնած տեղս Զրիկ Մուշ է ,
 Ինձ ասում են թէ աղուշ է ,
 Լալ և կոծում սգոյ գոյժ է ,
 Մշոյ երկիր խոժաղուժ է ,
 Իւր հոգին ու ջուր շատ անուշ է :

Ի 17 Յունիս 1889

Ի վան Ս . վարազ

ԵՐԳ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ

Աղատութիւն քեզ որոնի ,
 վաղուքական ես կանգ առի ,
 Մատաղ կեանքս կը թառամի ,
 Սիրտս լեցուած պէս արամի :
 Վկայ լինի Աստուած բարի ,
 Որ պայքարիմ ես մի տարի ,
 Վկայ լինի Աստուած անհուն ,
 Որ պայքարիմ տարին ի բուն :
 Բա՛ւ է հայեր ըլլանք ի քուն ,
 Աւերեցաւ ամբողջ մեր տուն ,
 Թշուառութիւն եղաւ անհուն ,
 Հայն ալ մեռաւ կորաւ անուն :
 Մականունս Տէր Աւետիս ,
 Թող զո՛հ լինիմ թշուառ ազգիս ,
 Երբ ախ կընեմ քաղաւի հողիս ,
 Աղատութեան սէրն ի սրտիս :

Ի 17 Յունիս

Ի Քղի

ՆՈՔԱ. ԵՆ ԿՈՂՈՊՏԻԶ

Երբ գնացի վանայ կառւոյ ,
 Հիւանդացոյ գինւոյ հոտուց ,
 Կղերք ժողուած էին մի խուց ,
 Խաչել հալին ասուն էր հունձ ,
 Կենդանի է Տէր Արարիչ ,
 Նոքա եղեր են կողոպտիչ :

Գիտցած ըլլաք կառւոյ վանքէ ,
 Ժամք կղերաց խաչէն թանգէ ,
 Քննիչ նրանց պէտք և անկ է ,
 Եկեղեցին դեռ անգանգ է ,
 Կենդանի է Տէր Արարիչ ,
 Նոքա եղեր են կողոպտիչ :

Բարի կղերք զիս պատուեցին
 Դասատուութիւն ինձ յանձնեցին ,
 Իրաւունքիս կէս կը եցին ,
 Իրենց մօօք անպարտ մնացին ,
 Կենդանի է Տէր Արարիչ ,
 Նոքա եղեր են կողոպտիչ :

Մազ է լաթով Սուրբ ձեւացան ,
 Իրաւունքիս կէսն ուրացան ,
 Մակոյկ նստան զծովն ալ անցան ,
 Բոլորովին զԱստուած մոռցան ,
 Կենդանի է Տէր Արարիչ ,
 Նոքա եղեր են կողոպտիչ :

Անբաղդ վարդան Տարօնացի,
Տարօրինակ պանփութս մնացի,
Յերուսաղէմ եղած ատեն,
Ի գղերաց դժգոյ մնացի,
Վկայ լինի Աստուած հարանց,
Որ բողոքեմ հանդէպ նրանց:
Ի 5 Մարտ 1881 Վան,
Ի Սուրբ Վարագ

ՄԻՐԱՀԱՐՈՒԹԵԱՆ ԳԻՒՂԱՅԻ ԱՂԶԿԱՆ Ի ՎԵՐԱՅ
ՔԱՂԱՔԱՅԻ ՄԱՆԿԱՆ

Աղջ. Ուսումնարան մեր գիւղական,
Ես օրիորդ և շինական,
Բարի եկար պարոն Տիրան,
Քեզ համար ևս աշխարհ կեամ:
Տղ. Ուսումնական եմ քաղքցի,
Անխելք աղջիկ, ես Առեցի
Խելքէդ, մտքէդ բանէ անցի,
Գնա՛ կորիր, կոչա՛ գիւղացի:
Աղջ. Գիւղի անուն մեր է Հողաս,
Երբ զիս տեսնէս իսկոյն դողաս,
Ոչ չուլ ունիք, ոչ մի փալաս,
Ձեա հաւնիր ինձ ծախում ես նաղ:
Ի 10 Յուլիս 1886
Քղի Ի Հողաս գիւղ

ՎԱՌԵԱՆ ՈՒԴԻ

Վարդան, Վահան Մամբրոնեան
Վառեալ սգւով նոյն իսկ ես կեամ,
Գուցէ սերունդ նոցունց լինիմ,
Ոգի մասնիչ երբէք չունիմ:
Թշնամիք իմ զինուք վանեմ,
Նախնեաց վրէժ ես կը հանեմ,
Որովի տեղ ցորեն ցանեմ,
Վաս խուժանի հողին հանեմ:
1888 Ի Սեպտ. 8 Ի Քղի

ՈՂԲԱՆԻ ԲՈՂՈՔ ԲԱՂԴԻՑ

Ո՛հ դու անդուծ անխիղճ բաղդիկ,
Է՞ր չես թողուր գնամ հայրենիք,
Չունիմ հայրիկ, իսկ ոչ մայրիկ,
Բա՛ւ է կրեմ դառն և վշտիկ:
Վշտերս թաղուն ցաւերս անհուն:
Չունիմ ոչ տեղ և ոչ ալ տուն
Կուլամ, կ'ողբամ գիշերն ի բուն,
Հիւանդ եմ ո՛հ չունիմ ես քուն:
Քունս փախչած գլուխս գիժած,
Հեծեծում եմ դէմքս տխրած,
Հողէտուս կայնած դիմացս,
Կամի գատեղ զհողիս ի բաց:

Գ Ի Ի Ղ Ի Ի Շ Խ Ա Ն

Հայ իշխանն եմ սիրուն Պատրիկ,
Վրան գործիր դու իմ գառնիկ,
Արեգական դուք տառ հառնիք,
Զեր թշմամեաց վրէժն տանիք:

Քեզ զինատուն ճրոնք Մառնիկ,
Պատանիք ձեր զընտին խառնիք,
Արի կացէք գերի առնիք,
Կեղտոտ բաներ յանձն հառնիք:

Դէպի՛ հայրենիք, մի՛թէ տանիք,
Թշնամու դէմ զինուք առնիք,
Զինուորաց մէջ վատեր չ'խառնիք,
Յերկնաւորէն չնորք կ'առնիք:

Դուն Պատրիկն եւ կամ թէ Մօրիկ,
Կեղծիք չունիս ընտ հարիք,

Շամիրէ զոտինն սիրան վարիս,
Զար թշնամու ճրագ մարիս:

Ի 28 Մալիս 1106

Ի Գասր-գիւղ

Պ Ա Պ Ի Խ Բ Ա Տ

Ականատեսն չտա եղայ ես,
Վատ թշնամու տուած վերքիս,
Դառն է կսկիծ իմ խեղճ ազգիս,
Կարդա՛ դու զայս աւարտ դասիս:

Մի մոռանար իմ նազէլիս,
Տուած խրատ Օրիորդիս,
Մանիր դու բուրդ գուլպայ չինիր,
Օրօրացիդ միշտ քով նստիր:

Միշտ մանուկիդ խրատ խօսիս,
Հայաստանի անցքեր ասիս,
Ատուած սիրես չմոռանաս,
Հայրենիքիդ զինուոր դառնաս:
Հայ նախատինք չուտով բառնաս:

Այս անգամքն մեռաքս մանիր,
Նոր մանուկիդ դրօշակ բանիր,
Կօրեկի աեղ ցորեն ցանիր,
Հայրենիքիդ վրէժ հանիր:

Ի 27 Մալիս 1909

Ի Գասր-գիւղ

Խ Ա Բ Գ Ա Խ Պ Ա Շ Տ Օ Ն Ե Ա Յ

Սոյն Եզուխ Օրման վատթար է անբան,
Վարեց նա պաշտօն անպէտ ե խոտան,
Խափեց խեղճ Հային նստաւ մեր գաշին,
Կարճուկ հասակաւ, պղծեց աղջիկ կին:

Արթնցէ՛ք հայեր վանեցէք հարեր,
Տան երկու տարի դրծող անաքի,
Պարա չէ նա մնալ Վափորի նեղուց,
Պէտք է վանել զայն անապատ Կառուց:

Ձոկել որոնն մաքրել ամբան հունձ,
Այդպէս յետ ընկած անամօթ անխած,
Զպէտք է լինել այնպիսին վտան,
Միշտ եղուիտ է նա անկասկած ուստա:

Ես անկեղծ Պատրիկ անլիններ Մօրիկ,
Բնաւ չեմ սիրում այդպիսի չարիք,
Ես եմ հեղինակ գաղափարակից,

Մորմոք քաշում եմ խիստ ցաւ ու կսկիծ:

1909 ի Մարտ 12

Ի Գասր-գիւղ

ԶԱՏԻԿ ԵՒ ԼՈՒԾԱՏԵՏԻԿ

Դու իմ սիրուն, փոքրիկ Զատիկ,
Ընկեր քո է լուսաւորիկ,
Հայք ոչ պահ են և ոչ ուտիք,
Երբ դուք միմեանց գնահատիք,
Այն ժամանակ դուք էլ մարդ իք:

Պուտ, պուտ, պուտ, պուտ, նախաշուն Զատիկ,
Դեղեցիկ է քուկին տոտիկ,
Կամաց եկուր զաւն ինձ մօտիկ,
Հարց ունիմ քեզ չառ խորտիկ:
Կարմիր Զատիկ սեւ բիծերով,
Քեզ զխտում են անցող դարձող,
Հայոց համար չիք ոք լացող,
Քեզնից աւել յոյժ գեղեցիկ,
Մութ գիշերով լուսաւորիկ:

Այն անտիճան պարտաւոր ենք,
Կտոր չկայ որ կարկատենք,
Շարունակեց մեծ պահք երկայն,
Նաւակառիք հինգ հինգական:

Երբէզ և Քիւրա որտեղ տեսան,
Կողոպտելով միշտ մեզ թական,
Միանալով մեզ մեռուցին,
Մեր սեփական հող տիրեցին:

Փոքրիկ Զատիկ ինչ ես տաւմ,
Հնկերանանք պէտք է պարտինք,
Զինուոր դրուինք միասիրով,
Զէնքեր առնինք յոյս հաւատով,
Պիտի յաղթենք Վահ Աստուծով:
Ի 28 Մայիս 1909 ի Գասր-գիւղ

ՕՏԱՐ ԱԶԳԵՐ ԱՆԳՈՒԹ ԵՆ

Օտար ազգեր չառ անգութ են,
Հայոց համար անողուտ են,
Գնաւ վաւօթ մեզ չառ փոյթ են,
Պատերազմի լաւ օգուտ են:

Որ հայն լինի ինձ բարեկամ,
Զօնէ ինձի ընծայ անգամ,
Եթէ գիտնամ ոչ է պեղ,
Վերադարձնեմ զայն ես իւր տեղ:

Անբաղդ Վարդան հանգոյն մեղուի,
Զեմ տալ վնաս այլում նեղուի,
Սէտա առ ազգս, չէ թէ Քիլի
Առ հասարակ ամէն տեղի:

Ի Յունիս 17 ի Քիլի

ՈՂԲԱԼԻ ՀԱՅ ՏԻԿԻՆ

Առաւօտեան արշալոյսին ,
Սոխակ նստել ծառի ճղին ,
Երդում է նա մըշտ գեղեցիկ ,
Խիստ հաճելի իւր մեղեդին :

Աչքեր դարձուց զէսլ՝ հայ տիկին ,
Մորմոքում էր նա դառնազին
Բիւրտ սպաննած էր զիւր ամուսին ,
Բռնարարած նորա հարսին :

Օրօր կ'ատէր որբ մանկրկին ,
Աչքեր դարձուց զէսլ՝ սոխակին
Հեծեծում էր յոյժ դառնազին ,
Գեղեցկուհի , Հայի տիկին :

Սեւ էր քօղի , իւր երեսին ,
Կուլար , կ'ողբար զիւր ամուսին ,
Կորուցեր էր մրակ որդին ,
Անուն նորա քաջ Աղասին :

Որչափ կուգես սոխակ երգէ ,
Ոտքէս ցլլուխ բոլոր վերք է ,
Թշնամիք իմ անգուլթ քիւրա է ,
Ինձ մահանալ չառ մեծ փառք է :

Ի 30 Մայիս 1909

Ի Գասր-գիւղ

ԲՈՂՈՔ ԱՌ ԳԵՐԱԳՈՅՆ

Վերին Դու Վերին , սաստիկ ամպերին ,
Սպառնանում է նա մեր արտ ափերին ,
Թրթուր և մարտիս մեր հայաբոյսեր ,
Շատ վար տեսակով զանոնք են կերել :

Արախ պահապանք շուտով են մնուել ,
Նոցա որդիներ քուրսեր են գերել ,
Չկայ օգնական լսէ մեր կալան ,
Մանկունք մորթիկն ծերեր էլ թական :

Բողոք կ'անեմ ես էն Գերազունին ,
Արտեր տւերին Թորդունան Հայկին ,
Ջենքեր կ'անեմ ես իմ Վարդան պապին ,
Ու նրա ընկեր ան ահ Գարեգին :

Ի 29 Մայիս 1909

Ի Գասր-գիւղ

ԳԻՄԱՌՆ ՈՒԹԻՒՆ

ԱՌ ՎԵՀԱՊԵՏԻՆ ԻԶՄԻՐԼԵԱՆ ՀԱՅՐԻԿԻՆ

Աքսորեցին զիս Վոսփորի ափից ,
Լալիս էի ո՛հ դառն է իմ կակիծ ,
Շուտ ժամանեցի աքսորեալ տեղիս ,
Հառաչում էի , քաղվում էր հոգիս :

Արձակեց Սուլթանն, համբուսեան բանակ,
Մոթթեց խեղճ աղզիւն անթիւ անքանակ,
Դառն է դրութիւնս ցորեկ մինչ իրիկուն,
Հեծեծում էի ես գիշերն ի բուն:

Հասաւ ծերութիւնս ես թառամեցայ,
Փառք Տեստն լինի կրկին յետ դարձայ,
Անաչառ կերպով յաջորդս դառեցին,
Կրկին իմ դահլիճ զիս բարձրացուցին:

Արդ կոչում է զիս Սրբ. էջմիածին,
Ձեռ կարող մարմել, իմ փոքրիկ հոսին,
Իզմիրլեանս եմ ես Հայրիկ Սրբազան,
Երկրորդ Խրիմեան աղզիս սիրական:

Հեղինակ եմ ես Պատրիկ կամ Մօրիկ,
Տարօնացի եմ, փոքրիկ Անդրանիկ:

Ի 13 Մարտ 1909

Ի Յամաֆ աղբիւր Կ. Պոլիս

ԻՆՉ Է ՀԱՅՈՒ ՄԵՂՔ

Աստուած ինքն է միշտ անեղ
Մարդկանց բնութիւն է ազեղ,
Հայոց բաժին է ընկել,
Որ թափառին գեղէց գեղ:

Ի՞նչ է նրա գործած մեղ
Ո՛չ սուր ունի ոչ աղեղ,
Հալածում են ամէն տեղ

Յոյժ մնացինք աղզով նեղ:

Ազատեա՛ զմեզ և այս հեղ,
Ոչ քաղաք մնաց և ոչ գեղ,
Խոխողեցին շատ անմեղ,
Չունինք բժիշկ և ոչ դեղ:

Ով դու ինքդ Սափաւօտ,
Չունիմ թեւեր որ դամ մօտդ
Է՞ր չես լսէր հայի բօթ
Հարազատ ենք մ'չ թէ խորդ:


Պղծեցին մեր օրիորդ,
Մեզ մօրթեցին իրր հորդ,
Միթէ սոքա չե՞ն օղորդ
Կառգի խուժան թափի մօրթ,

Ի 20 Մայիս 1909 Ի Գասը-գիւղ

ՄԱՏՆԻՉ ԴԱԻԻԹ

Շունս պիղծ դուի Դաւիթ վանայ դաւաճան
Ազգը ուրացող երկրորդ Մերութան,
Քեզ առիթ տուող անարգ է միայն
Ձեզի հաւատար այժմ և յաւիտեան:

Ձեր սեւ յիշատակ, իրրեւ կարկատանք,
Անմոռանալի, հայուն անարգանք
Ի՞նչ չարիք հասաւ խեղճ ժողովրդին,
Սուր դնել առիք մանկանց կոկորդին:



Արժան և անարգ վատին պարսաւանք
Դո՛ւք աղնիւ ծնունդ, հունդոյն չդառնաք,
Յուգայի անեծք լինի այն մարդին,
Որ առիթ կուտայ սոյն չար մակարդին:

Սոյն մասնիչ անուն իրենց կը բարդին,
Վատ կը յեշուի անուն կախարդին,
Չարեաց ճանապարհ նորքա կը հարդին,
Այս պատճառաւ է հային կը ջարդին:

Ի 29 Մայիս 1909 Ի Գասը-գիւղ

ՏԱՆՈՒՏԷՐ ԵՒ ԽԵՂՆԻՆԻՆԻ

Ճիւ, ճիւ, ճիւ, ճիւ, դու ճնճղիկ,
Ով է փետտէր դըր փետտէրիկ,
Թո՛ւր եկուր մեր կառուրիկ,
Քեզի կրտսմ մի քիչ կտիկ,
Պաղ, պաղ, պաղ պաղ անուշ ջրիկ:

Թեւերս փետտեց մի չար մանկիկ,
Ընկած մնացի պատի տակիկ,
Ոչ քուր ունիմ կոտիկ կտիկ:

Դիմա ինձի եկ քեզ մօտիկ:

Ես ամենից եմ խորոտիկ:

Կը բերեմ դքիկ մեր տան դռնիկ,

Վախեմ կ'ուտես մեր կորեկիկ,

Ապերախաւ է չատ խորոտիկ,

Կամայ կամայ եկ ինձ մօտիկ,

Քեզի կը տամ պաղ պաղ ջրիկ:

Օգնիր ինձի տանուէրիկ,

Մնացեր եմ դռնէ դռնիկ,

Ով դու իմ տէր տանուէրիկ,

Ոչ հէր ունիմ և ոչ մերիկ,

Շատ եմ փոքրիկ խիտ խորոտիկ:

Ի 29 Մայիս 1909 Ի Գասը-գիւղ

ՆՈՒՅԻՐ ՊԱՄՈՆ ԲԺԻՇԿ ՊՕՂՈՍ ՔԻԻԶԻԻՔԵԱՆԻ

Ծնունդ նորա է Ակիւտար,

Գործոց բարեաց է անդադար,

Իսկ այժմ ապրում է Գաղքեդօն,

Որտեղ աղքատ հիւանդ լինի,

Սլանում է իսկ անդ և հոն:

Ունի նաեւ մի աղնիւ կին,

Փոքրիկ զաւակ յոյժ թանկագին,

Բնութեամբ է նա յոյժ արի,

Լուրջ գործում է միշտ և բարի,

Չայն հալածող թող մութ մարի,

Նախանձ մարդու տունը քանդուի,

Տեղն էլ ցանուի որո՞մ գարի:

Արհեստի մէջ է նա հերոս,

Չինք հալածող մարդ չէ՛ այլ խող,

Չէ հարադատ պոռնիկ կամ բող

Բարեկամ իմ աղնիւ Տօքտօր,

Մի վհատիւր դուն չատ չուտով

Պաշտելին մեր չի թող տայ քեզ

Որ դուն լինիս միշտ ամօթով:

Ի 3 Մարտ 1909 Ի Գասը-գիւղ

ՏԱՊԱԼՈՒՄՆ ԱՄԲԱՐՏԱԻԱՆԻ

Անդուլթ, անմիտ մորթեց հային,
Անամնագոյն վատթար Համիտ,
Պղծեց սուրբ գահ նախորդներին,
Շատ չար գործեց անհամներին:
Հրաման արաւ ցած արարած,
Մորթել զհայք համատարած,
Բարձրացնում էր զիւր փառք մնապանձ
Զար սիրտ նորա էր քարացած:
Զինք կարծում էր միշտ ախտեան
Պալատ չինեց երկնաման,
Զար էր գործում միշտ անպիտան,
Տապալեցաւ հանգոյն գեհեան:

Ի 3 Յունիսի 1909

Ի Գասը-գիւղ

ՈՍԿԻ ՊԱՐԿԻԿ

Մի շան մորթի տաբաղ դրուած,
Հայոց արեամբ դուրսէն ներկած,
Ամբողջ պարկը ոսկով լեցուած,
Ոսկի պարկիկ ձողէն կախուած
Երեք մարդու ուսին դրուած,
Մեծ քաղաքի ասպարէզին,
Թեւակոխեալ մարդիկ խռնած
Եկողն հարցվեց այս ի՞նչ հանդէս:

Սոյն քաղաքին մեծ էր կրկէս,
Այլ ոք եկան նորինի տես,
Պար փակելով չրջանապէս,
Ահագին էր և նոյն հանդէս:

Հաստ շղթայիւք պարկիկ կապուած,
Երկաթ ցրցիւ գետին գամուած,
Ցրցին կապուած պահապաններ,
Զորքոտանի կապուած շիներ:

Հէզ պարկի Տէրն աղքատացած,
Լալէն աչքերն էր կուրացած,
Փոքր տղուն ձեռքէն բռնած,
Բայլափոխում էր յամրինթաց:

Զինք զխողովն ձեռք կառկառած
Ողորմութիւն խնդրում էր նա,
Գոյնը փախուց գլուխ ծռած
Արտասուաթոր բերանաբաց:

Փոքրիկ տղան ձեռքում բռնած,
Երկաթ կռան խրեց մի շան,
Պահապաններ իրար անցան,
Տեսարան նոյն վատի դարձան:

Ճարպիկ տղան միտքն դրած,
Պարկին պատուել ոսկին առնել,
Հարկ է մեզի արեւն թափել,
Բաւական է հային խարել:

Ի 15 Մարտ 1909

Ի Յամաթ աղբիւր

ԳՐԱԴԳ ՔՆՈՒՆԵԱՆ

Բարձր է ընտրվին այնչափ և անհուն,
Յխուս միածին ինքն է գերագոյն,
Դառն է մարդկային այժմեան դրութիւն,
Զի չի հետեւիր փրկարար որդւոյն:

Շատեր ըմբոստ են շատն էլ ապարդիւն,
Հաւատք չի ընծայուիր ապերախտ մարդուն,
Այլ մարդ չէ բարի վայրագ վիթխարի,
Միշտ խրում է փորում իր նմանների:

Էն է որ մեր կեանք վատ է անցկանում,
Մեր ծնեալ օրէն տարուէ քան զտարի
Ոմանք խրոխտում են շատ քիչ են բարի,
Դու հաւատքով լի լեր մարդ կորովի:

Թէ որ կուգես դուն դառնաս իմաստուն,
Կարգա՛ դայս էլ էջ, շուտ կըլլաս արթուն
Վերադարձիր դու քո հայրենի տուն,
Մի ընկերանար ապերախտ մարդուն:

Ի 17 Մայիս 1909

Ի Գասը-գիւղ

ՎԻՐԱԽՈՐ ՀՈՎԻԻ ԵՒ ԻԻՐ ՏՂԱՆ

Որդին Հովի՛ւ Հովի՛ւ առ քեզ բարեւ,
Է՞ր նստեր ես լերանց վերեւ,
Ման ես գալի խորշ ձորեր,
Զով օդ ծրծում ամէն օրեր:

Սրինգ կածես մ. դմիկ օդով,
Հայրենիք քո խուժ գուժ բոթով
Վրատ ծածկել ոչխար մորթով,
Շատ են երգել դարձել թոթով:

Քաջ իմ հովիւ եկ ինձ մօտիկ,
Դուն խորոտիկ նիստ իմ քովիկ,
Ձեռքդ առ ցուպիկ էլ դու դաշտիկ,
Արին կը վօթէ քո հայրենիք:

Հովիւ Մարմանդ հովիտ ես ման կը գամ,
Եկ քեզ պատմեմ մի թագուն բան
Մեզի մօտ է պարսիկ շուն խան,
Մեր ջուր դառն է հայն էլ անհամ:

Քիւրտ ու Չէրքէզ պարսիկն անգութ,
Բռնի տարին զոչխարս անիոյթ,
Հինգ հարիւր էր մազի և գուտ,
Յաւս ո՞ւմ պատմեմ, ո՞րուն է փոյթ:

Գիւղս թաղին աւար առին,
Էլ ինչ ասես մեզի չարին,
Մատքերս կտրին սիրտս փարին,
Իմ քաջ չներ եւս տարին:

Իմ յոյսս դո՛ւ, իմ քաջ որդիս
Վրէժ լուծես փոխանորդիս
Վ. ւ է վիճակս դառն է կսկիծս,
Քեզ ինչ ասես քաղուտ հողիս:

Որդի՛ն Աստուած ընէ որ Հմեռնիս ,
Երդու՛մ կընեմ իս իմ' արիս ,
Յետ պիտ' առնեմ ազգիս գերիս ,
Պիտ' հասկանաս իմ հէր դուն ես :
1889 ի Յունիս 6
Ի Գասը-գիւղ

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ

Աստուած ստեղծեց զբոլոր մարդիկ ,
Մի օրինակ ոչ մի կարծիք ,
Պահանջեց նա ստեղծածներէն ,
Օգնել միմեանց ազատօրէն :

Մարդիկ որքան շուտ ծուլացան ,
Իսպառ զԱստուած էլ մոռացան ,
Միմեանց զրկել սկսեցան ,
Փոխան ցորեան որոմ բուսան :

Դառն է դրութիւն մահու որդւոյն ,
Ինչո՞ւ գործեց նա չարութիւն ,
Ժրաջան է վեհանձ արթուն ,
Նորոգում է հայրենի տուն :

Ի 19 Մայիս 1909

Ի Գասը-գիւղ

ԿԵՂԾ ԲՐՕՖԷՍՈՐ

Խնէք է ծախում վաղն ու այսօր ,
Ամբարտաւան կեղծ բրօֆէսօր
Ճարտար է խօսում մինչդեռ այսօր ,
Քաղցած է մնում ամէն կէսօր :

Ձեռքում բռնած թղթի քարտէզ
Խօսում է նա ֆիզիկապէս ,
Յոյժ գեղեցիկ էր նոյն հանդէս ,
Խոնկալ էին նորին ի տես :

Ինքն Լատին մեծ բրօֆէսօր
Հաց է ուտում ցա՛նք ու չոր ,
Գորշ հագուստով ուռած էր փոր ,
Ռամբիլ դասուն զցում էր հոր :

Աւետարան նորա բնարան ,
Խաբել մարդկանց իբրեւ անբան ,
Ծուռ ու մուռ էր նորա ճամբան ,
Կը կարդար միշտ մարդկանց դամբան :

ՆՈՒՔԻ

ԱՌ ՕՐԻՈՐԳ ԻՍԿՈՒՂԻ ՆԱԶԱՐԵԱՆ

Դու Օրիորդ վեհ Նազարեանց ,
Զգացում ունիս իսկ չափազանց ,
Պերճ պարծանք ես դու հայկազանց ,
Բնութիւն ունիս բարձր գերազանց :

Ազնիւ որդի դու մէկ հատիկ,
Քո հայրն ու մայրն է երջանիկ,
Զուտ ես բնութեամբ չունիս կեղծիք,
Դստերց շարքում դուն անհատիկ:

Քաղցր բարբառ դու ինքդ գոհար,
Բարեաց գործոց միշտ անդադար,
Վարքով բարքով չես անկատար,
Հայ վերքերի դարմանատար:

Տեսայ զքեզ քաղաքավար,
Խօսքեր ունիս մարդարտախալ
Պարտաճանաչ ազնուափալ
Գնահատող միշտ անդադար:

Ազնուագոյն ես Իսկուհի
Արժան ես դու մեծ պարգեւի,
Քեզ կ'ընդունիմ ինձի որդի,
Էն դաս դասուիս Սուրբ նախորդի:

Իմ որդին ես դու յոյժ անկեղծ,
Հայր քո ես եմ միշտ բանաստեղծ,
Անարատ ես, դու անտխեղծ:

Զարիքներէ ապրիս դու զերծ:

Ի 4 Յունիս 1909

Ի Գասը-գիւղ

Բ Ի Ի Ր Կ Ղ Ե Ր Ք

Ես այժմ կ'ապրիմ Յամաք Աղբւր,
Կղերք ունինք հազար և բիւր,
Ոմանք կաղ են ոմանք էլ կոյր,
Զիք գաւազան և ոչ էլ սուր:

Այդ տեսակներ ընկնին ի հուր,
Մեղք հայ հացին կերել են զուր,
Ման են գալի դռնէ ի դուռ,
Անպէտ գլուխք կրում են խոյր:

Մէկին տեսայ անուն Պետրոս,
Կերել խմել դարձել էր խող,
Միւսին տեսայ անուն Մաղքող,
Ամբարտաւան ինքն էր գոռող,
Հայ աչքերին փչում էր թող:

Մէկին տեսայ անուն Խորէն,
Ոմանք գործեն միշտ կուրօրէն,
Շատ մարդերին փոս կը փորէն,
Զար կը գործեն աղատօրէն:

Կղեր եմ ես Սուրբ Վարդապ
Այժմ Պոլիս ես նոր եկայ,
Մեզնից շատ կայ ժլատ ազան,
Սենեկի տեղ կ'ապրին փակայ:

Ի 5 Մայիսի 1909

Ի Յամաք Աղբւր

Ա Ն Կ Ա Ր Գ Ժ Ո Ղ Ո Վ Ք Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն

Ժողովք ունինք կրօնական,
Ճիշտն ասացի բերանս փական,
Երբ բառներս կրկնեցի,
Բարկանալով գլխիս թական:

Կաշառակեր ախոյական ,
Զինքեանք կարծեն անմահական ,
Բանա նոցա չէ խեղական
Նոքա գործեն կեղծ ձեւական :

Վարք ցոյց կ'տան բարոյական ,
Գործքեր նոցա դժոխքական ,
Բարբառ նոցա թաթարական ,
Սքեմ նոցա սեւ սգական :

Ի Յ Մայիսի 1909
Ի Յամաթ Աղբիւր

Ժ Լ Ա Տ Հ Ա Ր Ո Ւ Ս Տ

Պալատ ունիք յոյժ բարձրացած ,
Սրտեր ունիք խիստ քարացած ,
Պաշտելին ձեր օտարացած ,
Ճոխ ապրելով դըդուս դարձաց :

Դժոխք ունինք բերան բացած ,
Գեհեան կրակ մէջն է լեցած ,
Դուն տաղտկալի հարուստ արի ,
Հոգիդ լքեալ մարմինդ բարի :

Այպէս վարուել արժան չէ ձեր ,
Աշխարհ կրնէք քարքանդ աւելր ,
Սիրով վարուէք ձեզ էլ չմնայ ,
Շուտով կանցնին այդ վատ օրեր :

Ճամբայ կը շինին լեռներ ձորեր ,
Շատ դուռ ու բաց , ուսած վտրեր ,
Զուգնթաց են վատ լաւ օրեր ,
Սիրեցէք դուք ձեզ նմաններ :

Այսօր ինձի վաղն էլ քեզի ,
Ուսած գլուխդ քիթդ տանձի ,
Պեխդ թափի մօրուքդ խանձի ,
Զայնդ կտրիր լեզուդ պապանձի :

Ի Յ Յունիս 1909

Ի Գասը-զիւղ

Գ Ո Ռ ՈՂ Ա Մ Պ Ե Ր

Ամպեր ամպեր յոյժ կապառնաք ,
Դուռում գոչում , կայծակ բոմբեր ,
Զին կը տեղաք կամ թէ անձրեւ ,
Երբեմն կուղուիք , երբեմն տրձեւ :

Շարժում ձեր է կարկրտարեր ,
Կը գողգողաք դուք անհամբեր ,
Երեւեցաք դուք շատ օրեր ,
Աւերեցիք փափուկ արտեր :

Անէծք կըստամ կը քայքայուիք ,
Մեզի համար փնտ տուիք ,
Ճիշտ շարժում մը երբեք չարիք ,
Հաճոյք ձեզի , պար կը պարիք :

Դարեր անցան ախ դուք ամպեր ,
Երաշտ չորցուց մեր Սուրբ հողեր ,
Փախչաք գնացիք իբր գողեր ,
Այլ տիրում են մեր իսկ հողեր :

Խարանեցիք զուք զմեր արեւը,
Դուք աներես դուռով ամպեր,
Միթէ՞ չտեսաք մեր քաջ պապեր,
Ամէն մէկն է աշխարհաշէն:

Բողոք կը տամ յանուն ձեզի,
Պիտ' հաշտ նայիք ամբողջը մեզի,
Երկինք լինի բանիս վկայ,
Պիտ' կորսնցնէք դուք ապագայ:

Մենք էլ ունինք մեզի քամի,
Ձեզ խրելով փարատ կանի,
Շատ հեռու տեղ ձեզ կը ցանի,
Չարեաց փոխան վրէժ կը հանի:

Ի 6 Յունիս 1909

Ի Գասր-գիւղ

ՓԱՅՏԱՀԱՏ ԵՒ ԱՆՏԱՌԱՊԱՀ

Հայտահատ մը շատ խեղացի,
Խելքէն մտքէն բան է անցի,
Չոքաւ անտառ փայտ հատելու,
Չունէր ձեռին մի սուր կայի:

Տեսաւ պահնորդ սոյն դրացին,
Խոժոռ նայէցարի դէմքին,
Յառմամբ կոչեց հայ անցւորդին,
Թող տուր զայդ բան շուտով անցի,

Ո՛հ փայտահատ դուն արթնցի,
Ձեւքդ ոչ սուր կայ ոչ էլ կայի,
Ահա քեզ դաս աւանդեցի:
Հաղիւ այս հնարք ես ճարեցի:

Անխիղճ Լօլօ քեզ եմ ասում,
Բռնած գործէդ շուտ յետ դարձի,
Հիւսիս կը դարնէ քեզ մի քացի,
Կ'ստէ վարդան Տարծնացի:

1889 Ի Օգոստոսի 15ին

Ի Մուշ

ԲԱՂԴԱՏՈՒԹԻՒՆ

Տէրտէր կայ Տէր է,
Տէրտէր կայ ժողովրդի հէր ու մէրէ,
Տէրտէր կայ Աստուծոյ հետ սէր է,
Տէրտէր էլ կայ ազգին վտանգ կը բերէ,
Այդպիսին չի լինի աւելի խէր է:

Մարդ կայ մարդ է,
Մարդ կայ վարդ է,
Մարդ կայ յարդ է,
Մարդ կայ գլխի զարդ է,
Մարդ էլ կայ ճանապարհ կը հարդէ,
Մարդ էլ կայ իրեն վիշտ կը բարդէ,
Մարդ էլ կայ խարդ է:
Մարդ էլ կայ սարդ է,
Մարդ էլ կայ սուտ ու փութ կը ճարդէ:

Կին կայ կին է,
Կին կայ հին է,
Կին կայ մին է,
Կին կայ սին է,
Կին կայ ճին է,
Կին կայ անդին է:

Հարս կայ հարս է,
Հարս էլ կայ կերած չի մարսէ,
Հարս էլ կայ ճերմակ վարս է,
Հարս էլ կայ միշտ կը բամբասէ,
Հարս էլ կայ կերած կը մարսէ,
Հարս էլ կայ միշտ լալով արտասուէնք կը հոսէ:

Հարս էլ կայ ապրած տուն բանտ ու փոսէ,
Հարս էլ կայ շատախօս է,
Հարս էլ կայ քրտինքի տեղ արիւն կը հոսէ,
Հարս էլ կայ խելահաս է,
Հարս էլ կայ գերազոյն անհաս է:

Ա. Գ. Ա. Հ. Վ. Ա. Բ. Դ. Ա. Պ. Ե. Տ.

Ժամանակին մի վարդապետ,
Հիւրընկալեց երէցփոխան մեծ Կարապետ,
Երբ մի դոյզն ոգի առին,
Նորա համար մեծ պնակով մածուն բերին:

Դիմաց նստած կար տանտիկին,
Գօտին կ'ապէր իւր մանկըկին,
Նա խաղում էր հետ զանգակին,
Մածուն ուղեց նոյն և կէտին:

Մայրն ինքն սասց մի լար Ղուկաս,
Հայր սուրբ կ'ուտէ, թողէ քեզ մաս,
Մեր հայր սուրբը չան պէս լղեց,
Կարծես թէ ինձ մածուն թողէ ց:

Ի 15 Սեպտեմբեր 1889

Ի Քլի Խուպէ գիւղ

Ա. Յ. Մ. Ե. Ա. Ն. Պ. Ա. Հ. Ա. Ն. Չ.

Երբ իմաստուն ես ու աղքատ,
Գերի ես սգէս հարուստի,
Դու խեղճ ու կրակ ես անբաղատ,
Էն է իմաստուն ու սիրելի:

Թէկուղ Մարդուանայ էշ էլ լինի,
Մանաւանդ գող աւաղակ,
Մարդասպան հարբեցող, շնացող,
Օրինաց հետ էլ հակառակ:

Մատնիչ ազգատեայ և զԱստուած էլ ուրացող,
Նա է ամենից մեծ համարում ունեցող,
Որչափ որ կ'ուզես դուն արա հառաչ,
Այս է այժմեան մարդկային օրէնք ու պահանջ:

Ի 12 Մայիս 1909

Ի Պալաքիա

ՈՂԲ ՅԱՆԴԻՄԱՆՈՒԹԻՒՆ

Այս ի՞նչ լաց և ի՞նչ կոծ,
Սրտումս դառել է կրակ ու բոց,
Անգութ թշնամուց հայք ստացել են վերք ու խոց,
Սիրտք նոցա հանգոյն ծով է ալէկոծ,
Դադար չունի վայրագ դադան, աւանակ է, օձ,
Հայ քաջ մանկունք դիմում են սաղարէզ հոծ-հոծ:
Ի 13 Մայիսի 1909 Ի Ս. Էջմիածին

ՅԱՆԴԻՄԱՆՈՒԹԻՒՆ ԱՌ ՀԱՐԿԱՀԱՒԱՔԻՉ

Աշխարհական ենք հեզ ժողովուրդ,
Մեզնից բռնի կուղեն մեծ տուրք,
Այլ մարի ձեր մոխ քանդուի ձեր ուրա:
Ոչ գինի մնաց և ոչ էլ դուրա:
Նոյնպէս ոչ ոչխար մնաց և ոչ էլ բուրդ,
Մի՞թէ չգիտես մեզ թալանեց մորթելով.
Վայրենի բարբարոս քիւրդ,
Դեռ էլի չի լինի յազուրդ:
Ի 6 Օգոստոսի, 2906 Ի Դավրէժ

ԲԱՐԻՔ ԱՇԽԱՐՀԻ

Աշխարհ լի են բարիք,
Ոմանք վայելում են,
Իսկ ոմանք էլ պէտք ունին ու կարիք,
Ոմանք էլ բարեաց փոխարէն գործում են չարիք:
Թող կեցցէ երեսասարդն այն Անդրանիկ,
Որ յանուն ազգութեան վօթեց արիւն ու քրտինք:

Թող մեռնի դժոխքի այն Համիտ սուլթան,
Որ կորուստեան պատճառ եղաւ անմեղ մարդկան,
Երկաթեայ վանդակ լինի նորա զնտան,
Անքակտելի մնայ միշտ և յաւիտեան:

Ի 29 Մարտ 1909

Ի Գասր-գիւղ

ՅԱՆԴԻՄԱՆՈՒԹԻՒՆ ԹՆԱՄԵԱՅ

Երբ մեր թշնամին իւր պիղծ բազկաւ,
Սուրն ի ձեռին է առած,
Հայոց անմեղ մանկանց խոխոզելով,
Իւր պիղծ բերանով մեր սուրբ արիւն է արբած:

Ոչ վան մնաց ոչ Բաղէշ,
Ոչ Սասուն մնաց և ոչ էլ Մուշ,
Չյադեցաւ չարածրձին,
Վատ սէգ պիղծն այն սալուշ:

Ահա համր և խուլ,
Եւրոպ դուն աշխոյժ,
Մի՞թէ ականատես չեղար,
Կամ չլսիր հայի սոսկալի դոյժ:
Ամօթ քեզ ոչ բօխկ ես,
Եւ ոչ էլ վիրաբւյժ:

Ինչպէս ստորոտ Գողգոթայի,
Գորովագոյթ մարք լալիս էին,
Չանմեղ խաչեայն վեհ Յիսուս,
Սմին նման պիտի ողբայ,
Առիւծն սէգ հիւսիւս:
Ի 10 Յունիսի 1989 Ի Քդի

ԲԱՂԴԱՏՈՒԹԻՒՆ ՄԱՆԿԱՆՅՈՒՆ

Մանուկ կայ նոյն է,
 Մանուկ կայ անդոյն է,
 Մանուկ կայ ձերմակ ձիւն է,
 Մանուկ էլ կայ անքուն է,
 Մանուկ էլ կայ ապրանք ու տուն է,
 Մանուկ էլ կայ ծնողաց սրտի սիւն է,
 Մանուկ էլ կայ սիրոյ բուն է,
 Մանուկ էլ կայ անհասանելի և անհուն է:

Օրիորդ կայ օրիորդ է,
 Օրիորդ էլ կայ սրբ է,
 Օրիորդ էլ կայ խորա ու բարդ է,
 Օրիորդ էլ կայ քամած լուլի թորդ է,
 Օրիորդ էլ կայ հորդ է,
 Օրիորդ էլ կայ անհարազատ ու խորդ է,
 Օրիորդ էլ կայ սրբամարթ է:
 Ի Յ Մայիսի 1909
 Ի Գասր-գիւղ

ԳՆԱՀԱՏՈՒՄ ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ

Ո՞ւր է մարդ այնտեղ է վարդ,
 Ո՞ւր է էջ այնտեղ է գէշ,
 Ո՞ւր է գիրք այնտեղ է միրգ,
 Ո՞ւր է աջ այնտեղ է խաչ,
 Ո՞ւր են աչք այնտեղ են քաշք:

Ով որ ունի անդգամ կին
 Նորա լաթերը են հին,
 Բարի ամուսին վեռ առ քո ուսին,
 Չար ամուսին թող տանի լեբանց հիւսին,
 Ամենեւին արժէք չունի անխելք Մահաւանին:
 Ի Յ Յունիս 1909
 Ի Գասր-գիւղ

ԿԵԱՆՔԻ ԲԵՐՄՈՒՆՔ

Դառն է աշխարհի կեանք:
 Ով որ փորձած չէ այս հանգամանք,
 Խարդախի համար զարնել, փշրել, կտորել և կտրել,
 Հանդոյն միւս և դանակ, է նոյն և խոկ անքանակ.
 Թէպէտ և որկոր նորա է անպարունակ:

Ինձ տեսնող անձինք տապալին՝
 Ով մարդ դու ես արարածների մէջ անբաղտ.
 Միթէ չգիտէս կայսերաց վայել է երկրաւոր թաղթ,
 Իսկ երկինք փնտռողներ են, յատուկ ու բարեբաղտ.

Իսկի չեմ մոռացել իմ մեծ պապիս խրատ,
 Որ ինձ ասում էր, դուն աղօթիր միշտ և անխորատ.
 Թէ ամուսնանաս մեծ վշտի տեք կը դառնաս,
 Իսկ եթէ հարստանաս վարքիդ մէջ արատ կունենաս:

Ապա եթէ պողպատեայ գաւաղն ունենաս,
 Ամբողջ աշխարհ ժուռ գաս պապիդ խրատը հմունաս,
 Սա է աշխարհի բան սուտ ու փուտ.
 Մարդիկ հարստացել և մաքրուել, դառել են զուտ.

Ի փառս մարդկանց երբեմն ողորմած .
ցանկերու մէջ աղգանուն են ստորագրած ,
Շատ անգամ զԱստուած էլ են մոռցած :

Է՛ Մօրիկ իմ տղաս ,
Աղէկ լսիր պապիտ առաջին դաս .
Դա՛ Վարժուիւր դողութիւն ,
Որ ամէն մէկ սրիկան կտայ քեզ թողութիւն .

Բո վարժարան թող լինի զինետուն ,
Ամբողջ գիշեր կը մնաս առանց քուն .
Իսկ առաւօտեան կը լինիս անդոյն ,
Իբրեւ անձրեւի տակ թրչուած շուն :

Իսկայն և ետ կը դառնաս ձեր տուն ,
Փսիածդ էլ կեր էն էլ լինումէ .
Բեղի միլաւ մարտողութիւն ,
Հաւատացէ՛ք եմ պապա ,
Այդպիսի տղան ոչ չապիկ կունենայ ,
Եւ ոչ էլ կապայ :

Չէ դու իմ տղաս եղբի գրպանահատ ,
Անշուշտ ապագային կը դառնաս դու մի գատ ,
Հող չէ թէ մարդիկ քեզ կանուանեն վատ
Միթէ չգիտես մեր նոր ուսումնական բրօֆէսօրներ ,
Ոչ Աստուած կնդունին և ոչ էլ նորա տնեղ դատ :

Ահա ինձանից քեզ մի աղղու խրատ ,
Եղբի աշակերտ դերձակին նախ ,
Կը դուրնաս նրա ասեղ մատնոց ու մկրատ ,
Երբ դատաւորդ է . . . պարսիկ կամ տաճիկ ,
Անշուշտ դուն էլ առանց դատուելու կը մնաս անպարտ :

Ամբողջ մեծ պահած կերածդ լինի աղցան ,
Ծնկի գատ եկեղեցւոյ դրան , իբրեւ հանգոյն մի շան ,
Երբ կը տեսնես հարուստ մարդ կամ պարսից խան ,
Երկրպագութիւն տուր դու նրանց իբրեւ անրան :

Յայնժամ տեղդ կը լինի ոչ թէ Աստուծոյ արքայութիւն :
Ճշմարիտ կասեմ , այլ դժոխքի մեհեան ,
Պէտք է ընդունէ իմ տուած խրատ անբարոյական տղան ,

Անշուշտ նա չունենայ աշխարհքի երեսին ,
Ոչ տուն , ոչ տեղ , ոչ հաց , ոչ ջուր և ոչ էլ սեղան ,

Եթէ պոլիս չունենաս քեզ տեղ ,
Անցիր գնա գեղէց գեղ մինչև Երևան ,
Այնտեղ շատ կայ քիզ նման :
Աչքէ անցկացուր Աղէքսանդրապօլ ու վաղարշապատ ,
Եթէ այն տեղ էլ բանիդ չի գար , Անունդ տիր Այլ կամ
Մուհամէտ :

Եղբի գոռոզ ու հպարտ ,
Այն տուն դուն ես ամենից անպարտ ,
Հարկաւ քեզի պէտ տղան ,
Աստուած չունի որ ան է դատ ,
Այն է որ ամէն բանից կը մնաս աղատ :
Ի 17 Մայիս 1909
Ի Գասր-գիւղ



ԵԹԷ ՀՈՎԻՒ ՏԳԷՏԷ

Ես տեսայ մի բան չաքարի նման,
Ներկայ է լինում ամէնի սեղան,
Մարդկային քիմքի նա է համաձայն,
Երբ ինքն է անհամ, ու տողն է անբան :

Նա է հանքային, ոչ թէ թանկագին,
Երբ համ չունի նա շատեր կանարկին,
Ամանների մէջ կը պատսպարուին :
Անով սեղաններ միշտ կը զարդարուին ,

Յետին աղքատին կայսերայ կայսրին,
Նա համ է տալիս նոցա կերակրին,
Անպատճառ պէտք է զայն առնել ձեռին ,
Մարդն է ապերախտ չի հարգեր աղին :

Երբ աղն անհամ է ինչ օգուտ մարդուն ,
Զիւր հոտ կը յանձնէ անիրաւ քրտուն ,
Մեռած է նա ինք, չէ հավիւ արթուն ,
Նա հարազատ չէ, ծնունդ է քրտուն :

ի 29 Յունիսի 1909

ի Գասը-գիւղ



ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ

ՀՀ Ազգային գրադարան



NL0372082

58183